



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՄԱՅԻՍ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 127

ԱՍՏՈՒԾՈՅ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՎՍՏԱՀԷ

Եթէ Տէրը ինք չշինէ քունը,
գուր քեղ կը յոգնին զայն շինողները.
Եթէ Տէրը ինք չպահպանէ քաղաքը,
գուր քեղ կը հսկեն պահապանները:
Առանց Տիրոջ՝
գուր քեղ է որ կանուխ կ'արթննաք
եւ գիշերը ուշ հանգիստի կ'անցնիք՝
քառապանքով հաց մը ուտելու համար.
Տէրը ինքն է որ քուն կը պարգեւէ իր սիրած մարդուն:
Տէրը իբրեւ ժառանգութիւն՝ որդիներ կու տայ,
իբրեւ վարձաբարութիւն՝ զաւակներ կը պարգեւէ:
Երիտասարդ քարիքին ունեցած զաւակները
կը նմանին ռազմիկի մը ձեռքին մէջ գտնուող նետերուն:
Երանի՛ այն մարդուն, որուն կապարճը անոնցմով լեցուն է.
անիկա ամօթով չի մնար՝
երբ իր թշնամիներուն դիմաց կանգնի դաքաստանի մէջ:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՐՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺՈՐ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄԻՆ ԵՐԵՄԻԱՅԻ

40 ԳԼՈՒԽ

ԵՐԵՄԻԱ ԳՈՂՈՂԻԱՅԻՆ ՔՈՎ ԿԸ ՄՆԱՅ (40:1-16)

40-րդ գլուխի 1-6 համարները մեզի կը ներկայացնեն Երեմիայի ազատագրումը: Աստուած երբ կը խոստանայ բան մը զայն կատարելու պայմանով կը խոստանայ, այնպէս չէ, որ պարզապէս խօսք փախու սիրոյն խօսք փայ կամ խոստանայ, այլ երբ կը խոստանայ, ուրեմն այդ խոստումը կը կատարէ: Սակայն այդ խոստումը կը կատարուի իր յարմար ժամանակին եւ Աստուծոյ ծրագրին համաձայն: Հոսկէ կու գայ նաեւ ըմբռնումն ու հասկացողութիւնը Աստուծոյ հաւատարմու կամ Աստուած իբրեւ այդպիսին դաւանելու, այսինքն՝ հաւատարիմ ու ճշմարիտ Իր փուած խոստումին: Միւս կողմէ, սակայն, յաճախ այդ խոստումին կատարման եղանակը մեզի փարօրինակ կը թուի, որուն համար ալ հարց կու փանք, թէ արդեօք Աստուծմէ է կամ թէ չէ: Առիթով մը Աստուած Եսայի մարգարէին ճամբատով պիտի ըսէ. **՚Իմ խորհուրդներս ձեր խորհուրդները չեն, ու իմ ճամբաներս ձեր ճամբաները չեն: Հապա որչափ երկինքը երկրէն բարձր է, այնչափ իմ ճամբաներս ձեր ճամբաներէն բարձր է, եւ իմ խորհուրդներս՝ ձեր խորհուրդներէն: Որովհետեւ ինչպէս անձրեւն ու ձիւնը երկինքէն կ'իջնեն եւ հոն չեն դառնար, հապա երկիրը կ'որոգեն ու զանհկա պտղաբեր եւ արգասատր կ'ընեն, ցանողին՝ հունք եւ ուտողին հաց կու փան: Իմ բերնէս ելած խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ: Ինծի պարապ պիտի չդառնայ, հապա Իմ կամքս պիտի կատարէ, յաջողութեամբ գործադրէ՝ այն բանը, որուն համար զանհկա դրկեցի՝** (Ես 55:8-11): Ահա նոյն ձեռով ալ Աստուած Իր փուած խոստումին համաձայն Երեմիան ազատելու:

Հերաքրքրական է Նաբուգարդայի արտայայտութիւնը. **«Քու Տէր Աստուածդ այս փեղին վրայ այս չարիքին մասին խօսած էր: Տէրը իր ըսածին պէս ըրաւ, որովհետեւ Տիրոջ դէմ մեղք գործեցիք եւ անոր միտք չըրիք. անոր համար այս բանը ձեզի պատահեցաւ»** (2-3 հմր): Հերաքրքրական է անոր համար, որ հեթանոս մէկը, հակառակ այն իրողութեան որ Տէրը չի ճանչնար, այնպէս ինչպէս Իսրայէլացիները, բայց ունի փրամաբանութիւն մը, ըստ իր հաւատարիքին, որ այս չարիքները ուրիշ բան չեն եթէ ոչ աստուածներու կողմէ եկած պարիժ, որուն դէմ մեղք գործած ըլլային: Թէեւ հեթանոսները ունէին իրենց չաստուածները, բայց նաեւ չէին մերժեր ուրիշ ազգերու աստուածութիւնները: Ահա թագաւորին հրամանին ընդառաջելով, Նաբուգարդան կու գայ ազատ արձակելու Երեմիա մարգարէն բանփէն: Եւ փետք, ոչ թէ միայն ազատ կ'արձակէ, այլ փակաւին **՚անոր պաշար ու պարգեւ կու փայ եւ կ'արձակէ՝** 5 հմր: Այս բոլորը ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ նախախնամութիւնը: Այնպէս ինչպէս անոնց կոտորածի մասին պատգամները փուաւ մարգարէին, որպէսզի ժողովուրդը ըստ այնմ եթէ անդրադարձաւ ու վերադարձաւ Աստուած փրկէ զիրենք, նոյնպէս ալ կոտորածի պահուն դարձեալ Աստուծոյ նախախնամութեամբ փրկելու եւ ազատելու մնացորդաց մը: Նոյն օրինակովը Նոյի, նոյն օրինակովը Իսրայէլի ժողովուրդին Եգիպտոսի ելքէն յետոյ: Ի վերջոյ, նոյն խոստումը նաեւ փրուած այսօր մեզմէ իւրաքանչիւրին: Մեր նեղութեան ու մեր դժուարութեան մէջ ամուր կարգած մնանք Աստուծոյ փուած խոստումին: Եթէ խոստացած է փրկել, ուրեմն պիտի փրկէ, սակայն փրկելու եղանակն է, որ յաճախ անհասկնալի, անըմբռնելի, ու մանաւանդ անըզնունելի կը թուի մեզի համար, որովհետեւ կը մրածենք, կարելի է՝ այս ձեռով Աստուած փրկէ Իր ժողովուրդը: Այնպէս ինչպէս խաչի պարագային, Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. **՚Խաչին մասին քարոզութիւնը յիմարութիւն կը թուի կորուստի ճամբուն մէջ գրնուողներուն համար, մինչ մեզի՝ փրկութեան ճամբուն մէջ գրնուողներու համար Աստուծոյ զօրութիւնն է՝** (Ա Կորնթ 1:18):